

Աստուածիմաստութիւն եզրոյթը, ինչպէս արդէն յիշուեցաւ, յառաջացած է չին Դարու վերջաւորութեան (մեր թուարկութեան 2-րդ կամ 3-րդ դարուն):

Չին Դարու վերջաւորութեան գտնուող փիլիսոփայական զանազան վերոյիշեալ ուղղութիւններուն կողքին, առկայ էին նաեւ կրօնական բնոյթ կրող տարբեր հոսանքներ կամ կրօններ, որոնցմէ յիշատակութեան արժանի են՝ *Յուդայականութիւնը* (Judaism) եւ *Քրիստոնէութիւնը* (Christianity): Արդ, զարմանալի չէ, որ վերոյիշեալ փիլիսոփայական ուղղութիւններու եւ կրօնական հոսանքներու միջեւ հակամարտութիւն եւ փոխադարձ ազդեցութիւններ յառաջանային:

Փիլիսոփայութեան ոլորտին մէջ, սկզբնական շրջանին, կը փորձուի կրօնախորհրդապաշտական (միստիկ, յուն.՝ *mystikós*) հակումներուն աւելի բանականութեամբ ու տրամաբանութեամբ մօտենալ: Այս իմաստով լաւագոյն օրինակը՝ **Պլոտինոսի**²⁴ (յուն.՝ *Plótinos*) հիմնած փիլիսոփայական ուղղութիւնն է՝ *Նոր-Պլատոնականութիւնը* (Neo-Platonism), որ հետագային, որոշ մանրամասնութեամբ պիտի ներկայացուի:

Շուտով սակայն, պիտի յստականար, որ բոլոր կրօնա-խորհրդապաշտական (միստիկ) հակումները կարելի չէր բանականութեամբ բացատրել կամ զանոնք բանականութեան համապատասխանեցնել, այնպէս որ փիլիսոփայական այս Նոր ուղղութիւնը (Նոր-Պլատոնականութիւնը), աւելի ուշ ժամանակաշրջանին, օրինակ ծագումով ասորի Նշանաւոր փիլիսոփայ **Իամբլիքոսի**²⁵ (յուն.՝ *Iamblichos*) ատեն, պլատոնական այս մօտեցումի մէջ ներխուժեցին եւ արագօրէն աճեցան ու բազմացան խորհրդաւոր առասպելներն ու ոգեհարցական զանազան պարապմունքները:

Նոր-Պլատոնականութիւնը, նկատի առնելով Քրիստոնէական կրօնի արագ տարածումն ու լայնատարած ազդեցութիւնը եւ հաշուի առնելով անոր ընկերային հասարակութեան որոշ կարիքներու բաւարարումը, ստիպուած էր փոխուիլ, ու ինքնին, տեսակ մը կրօնի վերածուիլ: Այսպիսով, Միջերկրական ծովու արեւելեան ափերուն, ուր առկայ էին զանազան մշակոյթներ եւ փիլիսոփայական ու կրօնական տարբեր հոսանքներ, պիտի սկսէր փիլիսոփայութեան եւ կրօնի միջեւ հակամարտութիւն մը, որ պիտի զարգանար ի նպաստ կրօնական մտածողութեան :

Փիլիսոփայութիւնը յառաջացած է մ.թ.ա. 6-րդ դարուն, առասպելական մտածողութեան յաղթահարմամբ, որուն օժանդակած են կարգ մը գիտութիւններ, ինչպէս՝ ուսողութիւնը (մաթեմատիկա), բնագիտութիւնը (ֆիզիկա) եւ

24 **Պլոտինոս** (յուն.՝ *Plótinos*, 205 – 270 թ.).-

Նոր-Պլատոնականութեան հիմնադիր յոյն փիլիսոփային մասին, տե՛ս **Մաս-2**ի, Գ. Գլուխը, Էջ 66 եւ **Մաս-9**, ՅԱԵԼՈՒԱԾԻ «Անուանացանկ» բաժինը:

25 **Իամբլիքոս** (յուն.՝ *Iamblichos*, 245 – 325 թ.).-

Ծագումով ասորի փիլիսոփայի մասին, տե՛ս ընթացիկ **Մաս-2**, Դ. Գլուխը, Էջ 85 եւ **Մաս-9**, ՅԱԵԼՈՒԱԾԻ «Անուանացանկ» բաժինը: